

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ԴՊՐՈՑՆԵՐ

Մարզի հանրակրթական դպրոցներ կատարվող պարբերական այցելությունների շրջանակներում ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Շահգալոյանն աշխատանքային այցով եղել է մարզպետարանի ենթակայությամբ գործող Հրազդան քաղաքի N9 և N 11 հիմնական դպրոցներ:

Այցելության շրջանակներում Կոտայքի մարզպետը համապատասխան մասնագետների հետ միասին քննարկել է հիշյալ դպրոցների շենքային պայմաններին վերաբերող հարցեր, անդրադարձ կատարել նախատեսվող հիմնանորոգման նախագծային և շինարարական աշխատանքների ծավալներին ու կազմակերպական ուղղություններին:

Այնուհետև տեղի են ունեցել հանդիպումներ դպրոցների մանկավարժների հետ: Կոտայքի մարզպետ Կ. Շահգալոյանը լսել է ուսուցիչների կարծիքներն ու առաջարկությունները, պատասխանել նրանց կողմից տրվող հարցերին՝ անդրադարձ կատարելով կրթական բարեփոխումների ընթացքին, կրթության որակի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքներին և համակարգում իրականացվող գործընթացների արդյունավետության բարձրացման ուղղությամբ անհրաժեշտ նախաձեռնություններին:

*Մարզպետարանի աշխատակազմի
տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժին*

18.04.2014 թ.